



□□□□□□□ □□□□□□□□□□□□

Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը, այս ամենն ամբողջանում է ուսուցչի մեջ:

Ադուլֆ Դիստերվեզ

Այս աֆորիզմի ամենավառ ապացույցն Ալվինա Տռուզյանն է, ում կոչումը մանկավարժ լինելն է: Ալվինա Տռուզյանը ծնվել է 1958թ-ի հուլիսի 20-ին, Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Կուշչի գյուղում: 1975թ-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի բաժինը: Ստացել մանկավարժի որակավորում: 1982թ-ից մինչև օրս զբաղվում է մանկավարժական աշխատանքով՝ կրթում և դաստիարակում է սերունդների: 1987թ-ից բնակվում է Բյուրեղավան քաղաքում: 1988-1990թթ. աշխատել է Նուռնուսի 8-ամյա դպրոցում՝ որպես դասվար: 1990թ-ից Բյուրեղավանի թիվ 3 միջ. դպրոցում դասավանդում է մաթեմատիկա առարկան, իսկ 1994թ-ից նույն դպրոցում աշխատել է փոխտնօրեն: Ալվինա Տռուզյանը Արցախյան շարժման ակտիվիստներից է, Ղարաբաղ կոմիտեի անդամ: Այդ տարիներին Ազատության հրապարակում նա պայքարում էր իր երկրի անկախության ու ազատության համար: Չնայած մասնագիտությամբ մաթեմատիկ լինելուն՝ նա դպրոցում պարբերաբար կազմակերպում է ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ՝ աշակերտների մեջ սերմանելով հայրենասիրության մեծ գաղափարը: 2003թ-ից մինչև այսօր Սամվել Վարդանյանի անվան միջ. դպրոցում (ավագ) աշխատում է ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն և մանկավարժ: Տիկին Տռուզյանը մեծ նվիրումով է կրում մանկավարժի կոչումը, շատ է սիրում իր գործը: Կոլոկոտիվում նրան անվանում են <<ծանր հրետանի>>: Մեզ հետ կիսվեց նրա մտերիմ ընկերուհին՝ Մարիետա Թումանյանը, նրանք մտերիմ են արդեն 23 տարի: Տիկին

Թումանյանն այսպես բնութագրեց. «Ուժեղ հայուհի, ով սիրում է իր երկիրը, աշխատանքը, աշակերտներին: Նա իր ամբողջ կյանքը տվել է մատաղ սերնդի դաստիարակությանը: Յուրաքանչյուր մաթեմատիկայի դասաժամ համեմուն է հայրենասիրությամբ, որից աշակերտները լցվում են սիրով՝ հայրենիքի հանդեպ >>: Երբ Ալինա Տռուզյանը պատմում էր իր անցած ուղղուց, ես աչքերի մեջ արցունքներ նկատեցի, այդ արցունքները նրա անկեղծության վկան են, որոնք խոսում են ազնվության և մարդկային կարևոր հատկանիշների մասին: Բյուրեղավանի քաղաքապետ Հակոբ Բալասյանը կանանց տոների առթիվ Ալինա Տռուզյանին խրախուսեց շնորհակալագրով: Ուսուցչուհու աշխատանքը գնահատվեց: Շնորհավորում ենք՝ մաղթում ուժ, կորով և անսահման կանացիություն:

Մերի Կարապետյան

07.03.13